ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 685-Ա **19 նոյեմբերի 2026 թ.**

«ՄԻՆՉԵՎ 2026 ԹՎԱԿԱՆԸ ԿԱՌՈՒՑՎՈՂ, ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎՈՂ ԿԱՄ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՂ 300 ԴՊՐՈՑ ԵՎ 500 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂԱՄԱՍԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ, ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կողմից S-4-40, /Մ-10/-/Հ-7/ (Գեղամասար) մարզային նշանակության ավտոճանապարհի կմ13+400 - կմ13+900 հատվածի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման, փորձաքննության և շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով համապատասխանաբար 2025 թվականի դեկտեմբերի 8-ին, 2026 թվականի հունվարի 16-ին և 2026 թվականի ապրիլի 23-ին «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն հայտարարվել են մրցույթներ:

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կողմից հայտարարված մրցույթների արդյունքում կնքված թվով 3 պայմանագրերի ժամկետները արդեն իսկ ավարտվել են և նոր մրցույթային գործընթացներ կազմակերպելու, պայմանագրեր կնքելու համար անհրաժեշտ կլինի առնվազն 30 օրացուցային օր, չհաշված անգործության ժամկետի տևողությունը:

Վարդենիս համայնքի Գեղամասար բնակավայրի մանկապարտեզը ներառված է Հայաստանի Հանրապետության կառավարության «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոց և 500 մանկապարտեզ» ծրագրում, որի հիմնանորոգման աշխատանքներն ամբողջությամբ ավարտվել են:

Հաշվի առնելով Վարդենիս համայնքի Գեղամասար բնակավայրի մանկապարտեզ տանող ճանապարհի անբարեկարգ վիճակը, ինչպես նաև նկատի ունենալով, որ ճանապարհահատվածի հիմնանորոգումը ներառված է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի 2026 թվականի 2-րդ կիսամյակի առաջնահերթությունների ցանկում, կարևոր է ապահովել ճանապարհի անցանելիությունը:

Վարդենիս համայնքի Գեղամասար բնակավայրի մանկապարտեզի լիարժեք շահագործումն ապահովելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել գնումը կատարել հրատապության հիմքով՝ մեկ անձից գնման ընթացակարգով:

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 21-րդ կետի դ/ ենթակետի դրույթներով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կողմից S-4-40, /Մ-10/-/Հ-7/ (Գեղամասար) մարզային նշանակության ավտոճանապարհի կմ13+400-կմ13+900 հատվածի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի, փորձաքննության և շինարարական աշխատանքների ձեռքբերումն իրականացնել հրատապության հիմքով՝ մեկ անձից գնման ընթացակարգով:

ՎԱՀԱՆ ՋԱՐՈՅԱՆ

Подписано ZAROYAN VAHAN 3103860463

ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ՎԱՀԱՆ ՋԱՐՈՅԱՆ

Ք. Գավառ